ԲԱՆԱՍԷՐ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Է ՏԱՐԻ 1905	Տարեկան՝ 15 ֆր. = 6 ռբլ. = 3 դոլար.	ՕԳՈՍՏՈՍ ԹԻՒ 8

ԱՆԻԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Թիւ 2. Պատճէն

Ըստացայ 1 օգոս. 1879 ամի.

Ազգասէր Անդամք Հոգաբարձական Ժողովոյ
Մայր եկեղեցւոյն Անւոյ

Անին որչափ մեծ է իւր յիշատակաւ ամէն հայրենասէր Հայ սրտերու համար, այնչափ մեծ լինելու է և մեր հոգատարութիւն նորա Մայր-եկեղեցւոյ վերանորոգութեան նկատմամբ. քան որում նորա անցեալ վայելչութեան և փառաց յիշատակ վերանորոգելու որչափ պաշտօն սահմանեալ եմք. ուստի մեք եթէ 'ի գործ դնեմք մեր կարեաց չափ գործունէութիւն նորա բնիկ յիշատակ կանգնեցնելու, մեր յիշատակն. եւս նորա հետ յաւիտեան անմահ կը մնայ.

Մեք ինչ որ պարտք էր մեր կողմանէ մեր ձեռնահասութեան չափով գործեցինք, առաքելով Ձեզ ընդ գրոյս Վեհափառ Կաթողիկոսէն մեզ տրուած կոնդակի օրինակը, որով վաւերացուցած է Անւոյ Մայր-եկեղեցւոյ վերանորոգութեան համար կազմուելիք ընկերութեան ԺԱ-րդ յօդուածը, որ տրուած է մեզ Ս Սինոդէն. ընդ այնորիկ և տեղւոյս նախկին Նահանգապետ Նորին Գերազանցութեան Պօղկօ Գեներալի տըւած Անւոյ Մայր-եկեղեցւոյ Նորոգութեան Արտօնագրի ռուսերէն օրինակը և նորա թարգմանութիւնը, որպէս զի դուք գանձեք այս ու այն ազգասէր անձանց ցուցանելով, որով լինիք մի հանգանակութիւն բաց անել, 'ի նպաստ Անւոյ Մայր-եկեղեցւոյ վերանորոգութեան և մի քանի անհրաժեշտներ պատրաստելու փոքրիկ միջոցանութեան մը համար.

digitised by A.R.A.R.@

Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակի եւ Գոպկո Գեներալի արտոնագրոյն բուն օրինակներ մեր մօտ պահեցինք չ'կորուսելու համար։ Զեզ դրկածնին նոցա պատճէններն են, զորս մեր իսկական ստորագրութեամբ վաւերացուցինք։

Երեւանցի Հեղինէ Տէր-Գրիգորեանց ազգասէր օրիորդ Անուշ Նորոգութեան քաղցր յիշատակէն յափշտակեալ, հակառակ կանացի տեսակար բնութեան կը խստանայ մինչեւ 'ի Տփխիս դիմել 'ի նպաստ Անուշ եկեղեցւոյ վերանորոգութեան հանգանակութիւն բանալ նորա յիշատակ անմահացնելու համար։

Ուրեմն յանձնի պարտաւորութիւն է մեզ ամէն ջան 'ի գործ դնել սոյն գործ յառաջ տանելու համար, մինչդեռ կանանց սեռէն անդամ մեր գործոյն հաւակրողներ ունիմք։

Մնամ աղօթարար Ձեր բարեյաջողութեան
Առաջնորդ Կարուց
Գրիգորիս Եպիսկոպոս
Ազուանեանց

30 Յուլիսի 1879 ամի
ՅԱստաջնորդարան
Հայոց 'ի Կարս։

—

Գաւառն

Կնիք

(Գէորգ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամ Հայոց 1866)

Գէորգ Տառայ Քրիստոսի եւ Աստուածոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Մայրագոյն Գահիս Համազգական Նախամեծար Սիոնոյ Արարատեան Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կայծուղիկէ Էջմիածնի բարեշնորհ Վարդապետաց, բարեկրօն քահանայից, տարկաւագաց եւ դպրաց, բարեջան թաղականաց, ուսումնասէր Հոգեւորականաց դպրոցաց քաղաքին Կարուց եւ Կղզլուանայ եւ հաւատոյն աւանաց, դիւզերէից բարեպաշտոն ժողովրդոց արանց եւ կանանց մեծաց եւ փոքունց, սէր ողջոյն եւ օրհնութիւն փրկչական։

'Ի բազմավտանգ տառապանաց պատերազմի անցեալ 'ի խաղաղութիւն՝ ուրախ եւ զուարթ էք այժմ, վասն եմք 'ի Տէր զի ունիք այսուհետեւ երջանկանալ կենաց նիւթապէս եւ քաղաքականութեամբ բարոյապէս լուսաւորելով զմիտս ձեր ուսմամբ եւ կրթութեամբ։

Եւ մեք մեզէն զայս ամենայն վասն Ձեր ցանկանալով պարտք

digitised by A.R.A.R.@

համարիմք խորհել միշտ զօգուտ Ձեր ըստ հոգւոյ եւ որ ինչ արժանն է ընդհանուր հայրապետի առ իւր հարազատ որդիս ըստ հոգւոյ խնամս եւ հոգածութիւն 'ի զարգանալ Ձեր 'ի բարեպաշտութեան եւ յաստուածսիրութեան ուսանել զայն եւ ուսուցանել։

Դուք ինքնին գիտէք թէ առն իւրաքանչիւր են պարտիք առ ազգն եւ առ եկեղեցին իւր, եւ ամենեցուն պարտ է որպէս խորհել զանձին օգուտ եւ փառաւորութիւն, նոյնպէս եւ ընկերին եւ ազգին գլխաւորաբար. զի օգուտ նոցա եւ փառաւորութիւն իւր են. եւ ինքն ընդ նոսա օգտի եւ փառաւորի. վասն որոյ եւ ամենայն ոք ամենայն իրօք պարտ է զայսմանէ խորհել եւ վասն այսորիկ աշխատել։

Այլ քանզի ամենայն բարիք եւ յառաջադիմութիւնք պտուղ են սիրոյ եւ խաղաղութեան, առաջին փոյթ Ձեր լինելոց է զի սիրով եւ խաղաղութեամբ կացջիք առ միմեանս իբրեւ մի անձն եւ մի հոգի աշխատել յօգուտ ազգի եւ եկեղեցւոյ. առաւելապէս 'ի դաստիարակել զորդիս Ձեր ուսմամբ եւ կենսաօգուտ արուեստիւ յորոց կախեալ են ազգային բարօրութիւնք եւ ապագային երջանկութիւնք մեր։

Իսկ մեք որ ըստ մերումս պարտաւորութեան հոգւովք միշտ վասն բարեկարգութեան եկեղեցեացն եւ ժողովրդոց մերոց առաջին հոգատարութիւնք մեր էին, զի որպէս ամենայն վիճակաց ըստ առաքելական կարգադրութեանց, ուրոյն կացուցեալ են Առաջնորդք առ բարւոք եւ ըստ քրիստոնէական օրինաց կառավարել զնոսա Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի. կացուցանել եւ 'ի վերայ Ձեր յեկեղեցականաց ատենի այնպիսի արժանաւոր ոք, որ մարթասցի ըստ Աստուծոյ առաջնորդել զՁեզ, բայց քանզի զարժանաւորութենէ եւ [illegible] հոգատարութենէ Առաջնորդին Ձերոյ հոգեւորն Գրիգորիս Վարդապետի Աղուանեան Ձերով հանրագրութեամբ վկայեալ էիք, հաճելի եղեւ եւ մեզ ըստ խնդրանաց Ձերոց զնա ինքն զԳրիգորիս Վարդապետն Աղուանեան հաստատել 'ի վերայ վիճակիդ Կարուց եւ ամենայն նորին գրաւեալ քաղաքաց եւ գիւղօրէից 'ի մեր կողմանէ Առաջնորդ եւ Տեսուչ պըռակեալ զնա առ այժմ վարդապետական ասպանակաւ յանձնախնդիր. փոխանակ զի սիրելի եղեալ էր Ձեզ, եւ ջան 'ի բարին վաստակեալ էր 'ի վերայ ձեր 'ի նեղութեան ժամանակին, վասն լինելոյ, զի որպէս կարաց յանձնառութեան եւ 'ի տառապանաց ժամանակին խոհեմութեամբ կառավարել եւ ժրութեամբ պահպանել զՁեզ նոյն եւ 'ի խաղաղութեան ժամանակին առաւել եւս աչալուրջ ժրութեամբ կարող է 'ի բարեկարգութեան 'ի սէր եւ 'ի խաղաղութեան պահել մանաւանդ աստուածային բանիւ յորդորել զբարեպաշտութիւն Ձեր վասն հաստատելոյ զուսումնարանս երկ ու սեռից. եւ ջանալ հոգածութեամբ կառավարել զայն որպէս. Նաեւ կերպիւ աջակցութեամբ եւ օժանդակութեամբ ձերով. անտարա-

digitised by A.R.A.R.@

գոյս եմք տեսանել զնա այս տեսեալ առաւել արթուն եւ գործող, որոյ վասն եւ ոչ անազան քան զոր դանկամբ յաջողեալ 'ի Ձեզ պատկեցուք բարձր կոչմամբ եպիսկոպոսութեան։

Իսկ որ ինչ վերաբերի 'ի բարեկարգութիւն վիճակիդ տուեալ եմք նմա 'ի Սինոդեն զտանձին գրաւոր հրամանդ, զոր ունի 'ի գործ դրնել 'ի միջի Ձերում, որում եւ դուք լսողք լինիցիք, զոր ինչ յոգուած Ձեր ըստ հոգւոյ առաջարկեսցէ Ձեզ, եւ դուք թեւակցութեամբ Ձերով պարտիք ընդ նմա աշխատիլ, զի հիմնեսցեն եւ հաստատութիւնս առցեն հրամանդին այնորիկ։

Ընդ նմին առաքեցաք զիւրն օրինութեան զարբայոյս միւռոն վանս համայն վիճակիդ մատակարարել ըստ պիտոյից եկեղեցեաց, եւ անտարակոյս եմք 'ի սէր զի դրաւնպաշտական տուրս Ձեր, զոր սովոր էք տալ վիճակային պոլիս. ունիք յանձնել նմա անխախան յոժարակամ արտիւրսա Ձերում ի ներմուտդն Աստուածպաշտութեան, զորս աշխատարկոյ յանուանէ 'ի տեսարին զոր կնքով Սինոդի վաւերացեալ տուեալ եմք նմա, մատուցանելոց է Սինոդին ըստ սովորութեան։ 'Ի լրանալ տարւոյն 'ի վերադարձութիւն։

Զայս ամենայն առանձինս բարեպաշտութեան Ձերում, աշխատեմք առ Աստուած յամենայն ժամ, պանել զՁեզ 'ի որդեգրութեան յերկայնաբարութեան, 'ի խաղաղութեան, յաղգաբերութեան եւ առաւել քան զամենայն յԱստուածպաշտութեան եւ 'ի գործս առաքինութեան, որոց վարձատրութիւնքն ըստ հոգւոյ փառաւորեսն յԱստուած, եւ պատուղս կեանք յաւիտենական։

Ողջ լերուք եւ օրինեալք յԱստուծոյ եւ յամենայն արքայ նոսա եւ 'ի Մէնջ ամէն։

Գէորգ Դ. Կաթուղիկոս
Ամենայն Հայոց

Թ. 99
'Ի 14ն Մարտի 1879 ամի
Ըստ տոմարին Ռոմի
'Ի Սբ. Էջմիածին

Վերոյիշեալ պատճենի ուղղութիւնը
վաւերացնելու համար կատարագրեմ
Առաջնորդ Կարուց
Գրիգորիս Եպիսկոպոս
Աղուանեանց։

digitised by A.R.A.R.@

Պատճեն

Հրամանագրեալ 'ի Սինոդէ Սրբոյ Էջմիածնի հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Առաջնորդին Հայոց Կարուց եւ բոլոր Նահանգաց նորին։

Յօդուած ԺԱ. առաջնորդն հետամուտ լիցի կարգել ընկերութիւն մի 'ի հինգ կամ 'ի վեց Անդամոց յԱզգաբանդաղել եւ 'ի շրջակայիցն Անոյ, որ ընդ վանահօրն գործեսցին ամենայն աչալրջութեամբ եւ յինութիւն Մայր-եկեղեցւոյն Անւոյ, առ 'ի հաստատել 'ի նմա վանական միաբանութիւն, եւ յոյժ գործունէութեան խորհրդակցեսցի ընկերութիւնն միշտ ընդ Առաջնորդին Կարուց

Ի 14 Մարտի 1879 ամի 'ի Սբ Էջմիածին

Սնդամ Սինոդի՝ Գրիգոր վարդապետ
Կնիք կայսերական (Ի Սինոդէ ս. Էջմիածն
Ատենադպիր՝ Ն.
Համարակալ՝ Ն.

Վերոգրեալ պատճենի ուղղութիւն վաւերացնիցս համար կատարեցիմ
Առաջնորդ Կարուց
Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանանց

Պատճէն 'ի պատճենոյ արտաքնագրոյն Ղարսի Նահանգապետ Կենդրալ-Էյսանանա Գոպոի յաղագս վերանորոգութեան Մայր-եկեղեցւոյն Անւոյ եւ պանդանութեան ուերակացն։

(Ներսեղ ռուսերեն բնագիր արտաքնագրոյն)

Վերոգրեալ արտաքնագրոյ թարգմանութիւնն է։—

Կարուց Նահանգապետ
16ն Մայիսի 1878 թիւ.
N 31
'ի գիւղն Գրգլչախչախ

Ներքին Գերապատուութեան
Ղօշավանքի վանահայր Ստեփաննոս
վարդապետին

Այցելելով Անի հին քաղաքի աւերակները, ես ցաւ 'ի սիրտ տեղեկացայ, որ մեզանից առաջ Տոնկատառնում գտնուող լեզուի կառավարիչների իրաւանց չարաչար գործածութիւնը մինչ այն ատեանն

digitised by A.R.A.R.@

է հասած, որ նոցանից մէկը ցոյց տալով զինքը իբրեւ ամէն այդ հին քաղաքի վերոյիշեալ աւերակներին, որ թանգագին պատմական յիշատակներէն սրբապղծութեամբ վաճառել է այդ պատկառելի Մեացորդները 'ի կառար. ամենայն աւերումն այն ամենի, որ կարողացեր էր դիմանալ ժամանակի մաշող ձեռքէն։ Եւ ծախելով կոփածոյ քարերը այլ եւ այլ մասնաւոր անձանց։ Մանաւանդ ուրախալի էր ինձ լսել ձեղանից Գերապատիւ Տէ՛ր, Ձեր բարեպաշտ ցանկութիւնը որ է եւ տեղացի քրիստոնեայ քնակչաց ցանկութիւն որքան եւ իցէ նորոգել Անւոյ աւերակներին մէջ լաւագոյն պանպանուի եկեղեցիներից մէկը եւ պաշտօն մատուցանել նրա մէջ։ Շտապում եմ յայտնել Ձերդ Գերապատուութեան իմ լիակատար համաձայնութիւնն ու թոյլատուութիւնը այժմէն իսկ ձեռնարկելու իրագործել Ձեր բարեպաշտական մտադրութիւնը, եւ այս մասին կը հաղորդեմ Ձեզ այնուհետեւ եւս լինելի կարեւոր տեղեկութիւնները։

Որովհետեւ ես ինձ համար պարտք եմ համարում ամէն միջոցներ գործ դնել Հայաստանի հին մայրաքաղաքի պատմական նշխարները պաշտպանելու կողոպտման եւ բարբարոսութեան երեսից, ուստի այս տեսակ միջոցներից մէկն էլ համարում եմ ձեր յանձն առած աշխատութիւնը, Հայոց ազգի վերոյիշեալ սրբավայրը վերականգնելու մասին։ Այս պատճառով խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Գերապատուութիւնից Ձեր կողմից եւս դմնց չ'առնուք հոդ տանել այստեղեւ ոչ աբաբաբութեամբ չ'ցփչանակէ ու չ'տանի ոչ սալեր, ոչ չինութեան այլ նիւթեր, աւերեալ քաղաքի սամանից դուրս, իսկ եթէ կ'նկատէք եւ իցէ կողմից մի այդպիսի ձեռնարկութիւն բարեհաճեցէք հաղորդի Շօրակելի զաւառապետին կարեւոր միջոցները նորա կողմից կարգադրելու համար։

Նահանգապետ Գենեռալ լէյտենանտ Գոլիցին

Ցանձնարարութեանց ատենագրաւոր

Ի. Շահամիրեանցի

Վերոյգրեալ պատճենի ուղղութիւն

վաւերացնելու համար կատարեցէք՝

Առաջնորդ Կարսայ

Գրիգորիս Եպիսկոպոս

Աղուանցեան